

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10.30-ին, տեղի ունեցավ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի 1962—1963 ուսումնական տարեշրջանի հանդիսավոր բացումը։

Հանդիսության նախագահում էր Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը։

Ճեմարանի վերամտի հանդիսությունն սկսվում է «Աշակերտք Քրիստոսի» շարականով։ Այնուհետև Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից Սերմնացանի առակը (ԺԳ 4—9)։

Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը, հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանի ղեկավարությամբ, կատարում է Թարգմանչաց շարականը՝ «Որք զարդարեցին» և «Մանկունքը»՝ «Նմանեալք»։

Վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Ճեմարանի նոր ուսումնական տարվա սկզբնավորության բարեբաստիկ առիթով, ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսքեր է ուղղում Ճեմարանի դասախոսական մարմնին և ողջ ուսանողության.

«Ամենապատիվ Սրբազան Հայր.

Ինչքա՜ն գեղեցիկ է Հայաստանի սեպտեմբերը, գեղեցիկ իր բնությամբ, իր մրգերով և արևոտ երկնքով։

Այս գեղեցիկ ամսվան առաջին օրերուն կսկսի նաև ուսումնական նոր կյանքը մեր դպրոցներուն ու նաև Հոգևոր Ճեմարանի մեջ, երբ հազարավոր ուսանողներ, գրքերը իրենց անութներուն տակ, կդիմեն դեպի ուսումնարանները, համալսարան, ինստիտուտներ։

Կա՞ արդյոք ավելի քաղցր շրջան մը մեր կյանքին մեջ, քան ուսանողության օրերը, երբ մենք կդիմենք դեպի մեր լույսի վառարանները, մեր դասընկերներով, ողջունելու մեր ուսուցիչները։ Ուսանողական օրերու այս քաղցրությունը կզգանք մենք, ավելի տարեցներս, երբ անցուցած ենք այդ երանելի օրերը, և այսօր ամենայն քաղցրությամբ կվերհիշենք մեր մանկությունն ու պատանեկությունը։ Անցած, գացած են այդ անմեղ, քաղցր, երջանիկ օրերը և մեր սրտերուն մեջ դարձած են հուշ։

Ահա նորեն հավաքված ենք այս սրահին մեջ, ուսուցիչ և ուսանող, Ձեր օրհնությամբ դիմավորելու ուսումնական նոր տարին, և

անդամ մը ևս նորոգելու «Հավերժական աշակերտության» մեր սրբազան ուխտը անոնց հիշատակին առաջ, որոնց հոգիները, կհավատանք մենք, կսավառնին միշտ այս սուրբ հարկին վրա։

Ձեր սուրբ օրհնությունները ուսուցիչներու և մեր ուսանողության վրա, որպեսզի բոլորենք ուսումնական նոր տարի մըն ալ բարի արդյունքներով։

Ուսումնական նոր տարվան այս շեմքին, կհայցեմ Աստուծո օգնությունը, Վեհափառ Հայրապետի օրհնությունը և Ձեր բարի աղոթքները Հոգևոր Ճեմարանի վրա»։

Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի խոսք առնելով, շնորհավորում է Հոգևոր Ճեմարանի վերամուտը, օրհնում է ուսանողության և դասախոսական կազմին, խոսելով գեղեցիկ և իմաստալից մի խրատական, ուղղված ուսանողության, քրտնաջան աշխատանքով, նվիրումով և ծառայությամբ արդարացնելու Վեհափառ Հայրապետի վստահությունը և հայ հավատացյալ ժողովրդի ակնկալությունները։

Խմբովին երգված Տերունական աղոթքից հետո, ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով ավարտվում է Հոգևոր Ճեմարանի վերաբացման հանդիսությունը։

Այնուհետև, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահության տակ, տեսչարանում տեղի է ունենում մանկավարժական ժողով։

Սեպտեմբերի 11-ին, երեքշաբթի օր, առավոտյան ժամը 9-ին, ուրախ և ցնծագին, հնչում է Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր տարվա առաջին զանգը և սկսվում են կանոնավոր դասավանդությունները։